նու լի բաժակներ են պարպում նրանց թանկագին կենաց։ Ճաշկերոյթից յետոյ բոլոր ձիաւորները ձիարշաւի հանդէս են կատարում հետևեալ կերպով։ Նախ և առաջ տափարակ դաշտի երկարութեամբ որոշում են տարածութեան մի սահման, օրինակի համար՝ մինչև դիմացի այս ինչ կամ այն ինչ ծառը։ Յետոյ բոլոր ձիաւորները իրար կողքէ-կողք շարւում են որոշուած գծի ուղղութեամբ, երեսները դէպի նշան դրած հեռաւոր ծառն ուղղած։ Նախ՝ հերթով քշում են զոյգ-զոյգ մինչև նշանակուած տեղը և այնտեղից էլ սուրալով՝ կրկին վերադառնում են իրանց կանգնած տեղը։ Այս արշաւանքի ժամանակ ձիարշաւ երիտասարդները իրենց հնարագիտութիւնն ու ճարպիկութիւնը մեծ խնամքով աշխատում են հրապարակ հանել։ Եւ ամեն մէկը մեծ ճիգ է թափում, որ թէ ինքը և թէ իւր ձին բոլոր ուխտաւորների հիացման ու գովասանութեան առարկայ լինի։ Ձիարշաւների պահուն ով որ հրացան է խաղացնում իւր ձեռքին, մերթ գաւակի վրայից երեսը դէպի յետ դարձրած, կամ աջ ու ձախ կողմը կռանալով, արագավազ ձիու փորի տակից և կամ ձիու վրայ երեսն ի վեր պառկած հրացան է պայթեցնում և իւր ընկերից առաջ է անցնում, ամենքի հիացման և բուռն ցոյցերի առարկան նա է դառնում։ Այս կարգով ամենքը թէ իրենց և թէ իրենց արագավազ ձիերի շնորհքը ցոյց տալուց յետոյ բոլորը միասին միանգամից՝ նշան տալուն պէս, սլանում են դէպի առաջ ու յետ։ Որի ձին ամենից առաջ է անցնում, այդպիսի նժոյգի ար-